



Հ. Մ. ԴԱՎԹՅԱՆ

«ԹՈՒԵԼԵԱՑ» ԵՐԳԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԱՌԹԻՎ

«Թուելեաց» երգերի բնույթը բացահայտող առաջին հավանական, թեև ոչ լրիվ, բացատրությունը տվել է Ստ. Պալասանյանը: Հակադրվելով նախորդ այն բանասերներին, որոնք այդ երգերի առանձնահատկությունը տեսնում էին չափածո լինելու մեջ, անվանում էին ժամանակագրական (այսինքրն՝ ժամանակագրական կարգով իրար հաջորդող պատմական երգեր) և կամ համարում էին վիպասանական երգերի տեսակներից մեկը (Հմիկ, Դյուլորիե և այլն), Պալասանյանը գրել է.

«Մեր կարծիքով թվելյաց երգերը միևնույն վիպասանների երգերն են, որ մեր թագավորների ու իշխանների գործքերը թղվում, համարում էին իրենց երգերի մեջ»¹:

Մեծանուն գիտնական Մ. Արեղյանը ևս գտնում էր, որ թվելյաց երգերը վիպասանաց երգերի «մի ուրիշ կոչումն է միայն»²: Այդ երգերի «թուելեաց» անվանելու հարցում հերքելով Գր. Խաչատրյանցին (որը պնդում էր, թե իբր «թուելեաց» բառի հիմքը ոչ թե «թվել» բայն է, այլ՝ «թվալ»)՝ Արեղյանը ապացուցում է, որ Խորենացու «թուելեաց երգք» արտահայտության մեջ «թուելեաց» բառը կազմված է ոչ թե «թվալ», այլ «թվել»

բայից, բայց վերջինս ոչ թե համարել (համբըրել, համրել) իմաստով առած, այլ այն իմաստով, որ ունի այդ բայի թիվ արմատը «թիվ ասել» ձևի մեջ»: Արեղյանը հիմնվում է Հայկազյան նոր բառարանի տված բացատրության և այն փաստի վրա, որ երբեմն եկեղեցական որոշ երգեր, ինչպես նաև մադթանքները, Առաքելոց գործքի ու թղթերի ընթերցվածները «թիվ են ասվում»⁴: «Ի թիվ ուսած», բացատրում է Արեղյանը, նշանակում է «քերան արած», բարձրաձայն ասելով, արտասանելով պատմած⁵: Իսկ «թուելեաց» անունն ստացել են երգվողներից, եղանակավորներից տարբերվելու համար:

Ավելի քան յոթանասուն տարի առաջ հայտնած այս կարծիքը, սակայն, վերջնական չի համարվել, թեև բանասիրության մեջ այդ երգերի մասին ավելի հավանապես կարծիքներ չեն էլ եղել:

Որ «թիվ ասելը» անգիր, առանց երգելու ասելն է, կասկածից վեր է⁶: Բայց արդյո՞ք այդ է նկատի ունեցել Խորենացին հնագույն երգերից մի մասին «թուելեաց» անվանե-

¹ Մ. Արեղյան, նշված աշխատություն, էջ 58:

² Նույն տեղում, էջ 69—70:

¹ Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց գրականության: Թիֆլիս, 1865, էջ 131:

² Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ: Վաղարշապատ, 1899, էջ 57:

³ Гр. Хачатрянц, Армянский эпос в Истории Моисея Хоренского, ч. I, М., 1896, стр. 197.

⁶ Այս հաստատում են նաև բոլորովին ուշ շրջանի տպագիր աղբյուրները: 1772 թ. Կ. Պոլսում լույս ընծայած իր «Գրքով կոչեցեալ երգարան» ժողովածուի 63-րդ էջում Պետրոս Դավանցին հետևյալ ծանուցումն է արել. «Մինչև ցատ երգեցմունք եղանակաւորք. ընդորս կցորդին և թիւ ասացածքս այտով որք հետևին»:

լով: Ահա այս մասին է, որ ուզում ենք հայտնել մեր նկատառումները:

Որպեսզի Խորենացին այդ տերմինն օգտագործեր, այն կամ պետք է գոյություն ունենար, գործածվեր ժողովրդի կողմից, այսինքն՝ երգող-կատարողներն իրենք այդ անունով կոչեին չափածո ստեղծագործություններից մի մասը, և կամ Խորենացին ինքը պետք է ստեղծեր: Այդ բանն առաջիններին վերագրելը բացառվում է, քանի որ ժողովրդական ստեղծագործությունները՝ երգերը, էպոսները, չափածո այլ գործերը կատարողները մինչև իսկ մեր օրերում էլ չեն տարբերում, թե դրանցից յուրաքանչյուրը չափածոյի որ ժանրին ու տեսակին է պատկանում: Ժամանակին «Սասնա ծռերի» ասացողներն այն անվանել են «Դավթի գրուց», «Դավթի պատմություն», «Ջոջանց տուն» և այլն՝ առանց իմանալու, որ այն մեկ բառով կոչվում է էպոս: Գրականության տեսաբանները, գրականության պատմություն շարադրողներն են, որ բնութագրում, դաստասում, անուններ են տալիս գեղարվեստական երկերի այս կամ այն տեսակին: Հետևաբար իր «Հայոց պատմության» մեջ հիշատակված բանավոր ստեղծագործությունները գնահատել, տեսակավորել և դրանց անուններ է տվել ինքը՝ Խորենացին: Իսկ դրա համար նա պետք է հիմնվեր սեփական գիտելիքների և այն գրական աղբյուրների վրա, որոնք օգտագործել է իր երկը շարադրելիս: Գիտենք, որ քրիստոնեական շրջանի շատ հեղինակների մասն Խորենացին ևս օգտվել է Աստվածաշնչի նաև բառա-ոճական և շարահյուսական ձևերից: Ինչպես կտեսնենք ստորև, իր Հայոց պատմության մեջ այնքան հաճախ հիշատակվող երգերից մի քանիսը՝ «թուելեաց» երգերը (որոնք, ինչպես վերևում ասվեց, երբեմն կոչել է նաև «վիպասանք») բնորոշելիս հետևել է Աստվածաշնչին: Պատմության Ա գրքի 1 (Ա) գլխում Տիգրանի կողմից Ածյախակի սերունդներին գերելարելու և Մասիսի ստորոտները բնակեցնելու մասին իր ասածը հաստատելու համար Խորենացին վկայակոչում է Գողթն գավառում ժողովրդի մեջ պտտվող հին երգերը, որոնց համար օգտագործում է «թուելեաց երգք» արտահայտությունը. «Յայտնեն գայս ճըշմարտապէս և թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն զհնկէտ գաստին Գողթան. յոք շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոցն նորա, յիշելով այլաբանաբար և զգարմիցն Ածյախակայ, վիշապագունս զնոսա կոչելով»⁷:

⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց: Տըփդիս, 1913, էջ 84, գիրք Ա, գլ. 1 (Ա,Ա):

Նախնի թագավորների, իշխանների մասին վիպող այս կտորները, որ Խորենացին «թուելեաց երգք» է անվանում, իրենց բովանդակությամբ ու ձևով նման են աստվածաշնչյան «թվելյաց գրքի» այն չափածո երգերին, որոնցում պատմվում է հրեաների նախնիների, առաջնորդների մասին: Կարծում ենք, որ այս նմանությունից էլ գնելով, Խորենացին հայ հնագույն երգերի այդ տեսակին «թուելեաց» անուն է տվել, որ նշանակում է «թվելյաց գրքում» հանդիպող երգերի նմանությամբ երգեր: Իր համատուտ սիրությանը հետևելով արտահայտել է կարճ՝ «թուելեաց երգք» ձևով⁸: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «թուելեաց» երգերը Խորենացին դասում է այն ստեղծագործությունների շարքը, որոնց հավաստիությանը ինքը չի կասկածում, ճըշմարտապատում է համարում («Յայտնեն գայս ճըշմարտապէս և թուելեացն երգք...»): Աստվածաշնչի «թվելյաց գրքի» չափածո հատվածների և հայոց «թուելեաց» երգերի նմանությունը ակնհայտ է: Իրենց հերթին այս հատվածների, նաև սաղմոսների, «Երգ երգոցի», «Հոբի գրքի», «քաղցրալուր», «հզոր երածշտականությանը մը լի ազատ ոտանավորով» թարգմանությունները, ինչպես ժամանակին նշել է Ա. Չոպանյանը, մեկ անգամ ևս հաստատում են նախաքրիստոնեական Հայաստանի զարգացած, հարուստ ու բարձրարվեստ ժողովրդական բանաստեղծության գոյության փաստը⁹: Մեր

⁸ Խորենացու «Հայոց պատմության» գրելու պահից դեռևս մեկ և կես դար առաջ Աստվածաշունչը մուտք էր գործել Հայաստան և կարելի է ենթադրել, որ «թուելեաց երգք» արտահայտությունը Աստվածաշնչի ազդեցությամբ նախ գործածել է ժողովուրդը, սպա ժողովրդից էլ առել է Խորենացին: Սակայն սակավ հավանական է, քանի որ նախքան հայերեն գրերի գյուտը, աստվածաշնչյան քարոզները կարդացվում էին ժողովրդին խորթ ու անհասկանալի հունարեն կամ ասորերեն լեզուներով: Նոր կրոնը դշուրությանը չէր ընդունվում, ուրեմն և նրանում գործածվող հասկացողությունները չէին կարող լայն տարածում գտնել: Այդ առթիվ կա Կորյունի հիշատակությունը նույնիսկ մերոպյան շրջանի վերաբերյալ: Խոսելով Մաշտոցի գործունեության մասին Գողթն գավառում, Կորյունը գրել է. «Իսկ երանելին... իշխանի (Գողթնի իշխան Ծարիթի—Հ. Դ.) հավատարիմ օգնականությանը սկսեց [քարոզել] գավառում ամենքին իրեն հայրենական ավանդություններից ու սատանադական դիվապաշտ ծառայությունից գերեց, շուր տվավ Քրիստոսի հնագանդությանը»: (Կորյուն, Վարք Մաշտոցի: Եր., 1941, էջ 41):

⁹ Ա. Չոպանյան, Աստվածաշնչի թարգմանությունն ու հայ բանաստեղծությունը—«Անահիտ» (Փարիզ), 1936, № 3, էջ 13:

հնագույն երգերի բնությունն ժամանակ այս հանգամանքը չպետք է աչքաթող արվի: Բաղդատության համար նախ քերենք Խորենացու հիշատակած կտորներից երկուսը.

Շաշ գործեալ Արգասանաց ի պատի Արտաշիսի,
Եւ խարդասանակ նմին լեալ ի տանարին վիշապաց:

Ապա՝

Արտասազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի
Տեղեկիկ սպարանից ի հիմնանակն Արտաշատու՝
Նա անց, գնաց և շինեաց ի մէջ մարաց Մարակերտ¹⁰:

Ահա և օրինակներ «թվելյաց գրքից»: Այս գրքում պատմվում է Եգիպտոսից վերադարձող իսրայելական տասներկու տոհմերի թվական կազմի, նրանց առաջնորդների, զորքերի քանակի, կրոնական ծեսերի, օրենքների մասին: Այդ տոհմերի դեպի Պաղեստին ընթացալը շարադրելիս՝ ԻԱ գլխի 13—14 տներում «Տիրոջ պատերազմները» կոչվող գրքից հետևյալ չափածո քաղվածքն է արված.

ԶՎահէպ ի Մուփա,
Եւ զձորսն Առնովնայ,
Եւ հեղեղք ձորոց, որ գնան ի բնակությունս Երայ,
Եւ հասանեն ի սահմանս Մովաբու¹¹:

Նույն գլխի 25—30 տներում ամորհացիների և իսրայելացիների միջև ծագած պատերազմի և վերջիններիս հաղթանակի փաստը հաստատելու համար վկայակոչվում

¹⁰ Մովսէս Խորենացի, Պատմություն հայոց: Թիֆլիս, 1913, էջ 84:
¹¹ Թիւք, գլ. ԻԱ, տուն 13—14: Այս հատվածի այլ թարգմանությունը շատ է հիշեցնում «Վարդգէս մանկան» առասպելը.
ԶԶովոր հրձիգ արար և զձորն Առնովնայ,
Եւ հաստատեաց զձորսն բնակեալս լէր,
Որ ստընթեր կայ սահմանացն Մովաբու:

են բանավոր երգերը. «Վասն պնորիկ ասեն ամենայն ստակարկութ»: Ապա բերվում է հետևյալ հատվածը.

Եկայք յԵսեթուն.
Զի շինեացի և հանդերձեացի քաղաքն Սեհունի,

Զի հուր ել յԵսեթունայ
Եւ բոց ի քաղաքէն Սեհունի,
Եւ եկեր մինչեւ ց'Արն Մովաբու,
Եւ յափեաց զարձանսն Առնովնայ:
Վա՛յ քեզ, Մովաբ,
Կորեար, ժողովուրդ Բամովսայ,
Մատնեցան ուստերք նոցա ի փախուստ,
Եւ դատերք նոցա ի գերություն թագաւորին Ամովրհացոց Սեհունի.

Հարաք զնոսա նետիք.
Եսեթուն կորեալ մինչեւ ց'Ռեթուն,
Եւ աներեցաք զնոսա մինչեւ ի Նոբա, որ ստ Մեղաբայ¹²:

Ծատ հավանական է թվում, որ թեմատիկայի ու բանաստեղծական կառուցվածքի ընդհանրությունը քրիստոնեության ջատագով Խորենացուն թելադրել է՝ իր սիրելի հայոց հնագույն երգերի մի տեսակը աստվածաշնչյան անվանումով կոչելու: Այլ խնդիր է երգվե՛ն, թե՛ արտասանվել, առանց եղանակի են ասվել «թուելեաց» կոչվող երգերը: Իր աշխատության մեջ միայն մեկ անգամ, Ա գրքի 1 (ԱԱ) գլխում «թուելեացն երգք» արտահայտությունն օգտագործելով, Խորենացին դրանք անվանում է երգեր («...որս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոց նորա»): Ինչո՞ւ երգ բառն այստեղ չպետք է հասկանալ իր բուն իմաստով: Եվ իրոք, եթե դրանք Արտաշեսի մասին ժողովրդական ընդարձակ վեպի չափածո հատվածներն են, որ հարատևել են մինչև Խորենացին ու հետագայում էլ, ուրեմն ավելի շուտ պետք է երգվե՛ին, քան արտասանվե՛ին:

Բնավ չենք կարծում, թե ներկա դիտողությունները անհերքելի են, սակայն հույս ունենք, որ դրանք օգտակար կլինեն հայոց հնագույն բանավոր ստեղծագործությունների հետազոտության համար:

¹² Նույն տեղում, տուն 27—30: